

եւ պարուք զգինին ըմպէին», եւ «ի կա-
րաս խաղուց եւ յերգս գուսնաց հեշտա-
նային» (Գր. Վրդ. Ողբ): Այս բողոքը սո-
վորական էին նաեւ Յունաստանի եւ Հռով-
մայ (Դար. Ա, 1271, 1374), Հրէից (Ժող.
Բ, 8. Բ Թագ. ԺԹ, 35), Փիլոնի ժամանա-
կակցաց (Ճոք. 21) եւ Բիւզանդացւոց (Ե-
մես. 136):

Կեդրոններէ հեռի կատարուած խնճոյից
մէջ, ուր սովորաբար դժուարին էր ա-
րուեստաւոր գուսաններ գտնել, մանաւանդ
ստորին դարերուն, երգերն հաւասարապէս
կը հնչէին, բայց կոչնականաց բերանէն՝
որոնք յարմարութիւն ունէին: Այսպէս՝
Խորենացւոյն աւանդութեան հացկերութիւն
մէջ կ'ըսուի՝ որ բազմականք «մի առ մի
յարուցեալ՝ երգէին զերգս առաջի Հայրա-
պետին» Յովհաննու (Հյպտ. 195):

Այս գեղօնից¹ (Ոսկ. Թղթ. Ա, 894, 66)
կամ խնճոյական երգոց (անդ, 895) կամ
արքեպոսրեան երգոց (Եղիշ. 52) նիւթը կը
կարծեմ սիրային, վիպական, եւ ներբողա-
կան: Հարկաւ առաջնոց կ'ակնարկէ Եղի-
շէ՝ երբ «մարդիկ, կ'ըսէ, գերին ի լկտի
երգս ձայնից» (261), եւ զորս այլուր
յայտնապէս կը կոչէ «զերգս հեթանոսա-

1. Գեղօն՝ ածանց է, գեղ-օն, եւ արմատը գեղգեղ կամ
գեղգեղել բարդից: